**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**<<ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>>**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ**

Հարգելի Գործընկեր

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «ՍՊԱրմԾ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և հնարավոր մասնակիցներիի միջև կնքված ՈՇՀԱՊՁԲ-11/1 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱԻՆ «Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեով,հեռ.010-31-78-49, գնումների համկարգող՝ Սամվել Հարությունյանին, մինչև 2014թ. փետրվարի 24 -ը, ժամը 11:00-ն:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱԻՆ շենքում, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 հասցեով, 2014թ. փետրվարի 24 - ին, ժամը 11:00-ին:

Հայտի բնօրինակը և պատճենները (2 օրինակ) ներառում են գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» N ՍՊԱԾ-ՇՀԱՊՁԲ-11/1-14 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:

Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյաների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և /կամ տվյալները:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքով՝

Ս.Մարգարյան

❑ 0082 ք.Երեւան,Ծիծեռնակաբերդի խճուղի8/1
❑ Հեռ. 374 (10) 54-29-06
❑ Ֆաքս.374(10)58-68-41
❑ 0082, Yerevan, Tsitsernakaberd highway8/1
❑ Tel.: 374 (10) 54-29-06
❑ Fax: 374(10)58-68-41
❑ E:mail: ain_wssp@mail.ru
❑ 0082, Ереван, Цицернакабердское шоссе 8/1
❑ Тел.: 374 (10) 54-29-06
❑ Факс: 374(10)58-68-41